ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1745-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան 16.11.2022 11:45:00	Առաջարկում եմ հնարավորություն տալ ուսուցչին ընտրել վերապատրաստման անցկացման վայրը, քանի որ դա հնարավորություն է տալիս ուսուցչին տարածքային առումով իրեն հարմար վայր	Վերապատրաստման կարգի վերջին փոփոխություններով հատկապես կարևորվել է այդ հանգամանքը, նախ՝ երաշխավորվել են տարբեր	

		ընտրել և ժամանակ չկորցնել ճանապարհներին:	կազմակերպություններ, որոնց ընտրելու է հենց ուսուցիչը՝ առանց տնօրենի և կողմնակի որևէ այլ միջամտությունների:	
2	Կարինե Բաղիյան 15.11.2022 20:40:51	Կարծում եմ կարելի է կազմակերպել նաև օնլայն վերապատրաստումներ:	Հեռավար վերապատրաստումներ թույլ է տրվում բացառիկ դեպքերում և կարգավորվում է վերապատրաստման կարգով, որում կատարվել են փոփոխություններ և ներկայումս շրջանառվում է:	